Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
մայիսի 23-ի նիստի N 20
արձանագրային որոշման

Եզրակացություն
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության վերաբերյալ

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությանը՝

“3.2. Համախառն առաջարկ և համախառն պահանջարկ” բաժնի վերաբերյալ նշենք, որ 2012 թվականին տնտեսության զարգացման տեմպերը շարունակել են արագանալ՝ հիմնականում ներքին տնտեսությունում ձևավորված հավասարակշռված մակրոտնտեսական քաղաքականության պայմաններում: Միաժամանակ, կառավարությունը շարունակել է տնտեսության արտահանելի հատվածի զարգացման բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացումը: Այս պայմաններում բարձր է եղել արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում ներդրումների իրականացման պատրաստակամությունը, իսկ տնտեսական աճին արտադրողականության բարձրացման բարձր նպաստումը շարունակել է պահպանվել:

Տնտեսական ձեռքբերումների ամրապնդմանը նպաստել է նաև ցածր գնաճային միջավայրի առկայությունը՝ կենտրոնական բանկի կողմից իրականացվող չեզոք դրամավարկային քաղաքականության պայմաններում: Միաժամանակ, շարունակել է բարելավվել տնտեսության վարկավորման կառուցվածքը՝ ինչն արտահայտվել է առաջարկը խթանող վարկերի (արդյունաբերությանն, գյուղատնտեսությանն, տրանսպորտին և կապին ուղղվող) առաջանցիկ աճի տեմպերով:

Ըստ էության տարվա ընթացքում իրականացված դրամավարկային քաղաքակա-նության ուղղությունները պայմանավորվել են ձևավորված և սպասվող մակրոտնտե-սական միջավայրի պայմաններում գնաճային ճնշումների բացակայությամբ: Արդ-յունքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը տարեսկզբից

անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Միաժամանակ, չնայած վարկավորման տեմպերը որոշակիորեն կրճատվել են, այդուհանդերձ դեռևս մնացել են բարձր մակարդակի վրա:

“3. 2012 թվականի չորրորդ եռամսյակի փաստացի զարգացումներ” բաժնի գնաճի զարգացումներին և դրամավարկային քաղաքականության ուղղություններին վերաբերող հատվածների առնչությամբ կարելի է եզրակացնել, որ հաշվետվությունում բերված գնահատականների համաձայն իրականացված չեզոք դրամավարկային քաղաքականությունը հիմնավորվել է հիմնականում առաջարկի գործոններով պայմանավորված գնանկումային ժամանակավոր ճնշումներով, սակայն հարկ է նշել, որ տարվա գերակշիռ մասում բնականոն գնաճը, որը առաջարկի գործոնների ազդեցությունը չի ներառում, պահպանվել է գնաճի թիրախի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին հատվածում[1], ինչը դրամավարկային պայմանների որոշակի թուլացման նախադրյալներ էր ստեղծում: Վերջինս կարող էր նպաստել նաև դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների առավել արդյունավետ կոորդինացմանը, քանի որ տարվա ընթացքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը նախատեսվածի համեմատ եղել է ավելի զսպող և այս պարագայում ձևավորված ցածր գնաճային միջավայրի պայմաններում դրամավարկային քաղաքականությունը առավել ճկուն պետք է լիներ՝ նպաստելով տնտեսական ակտիվության բարձրացմանը: Նշենք, որ զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում պայմանավորվել է ՀՆԱ նկատմամբ բյուջեի պակասուրդի կրկնակի ցածր ցուցանիշով՝ 2012 թվականին նախատեսված 3.2%-ի դիմաց փաստացի կազմելով 1.5%: Դրամավարկային պայմանների թուլացումը թույլ կտար նաև առավել արդյունավետ պարտքի կառավարման քաղաքականություն իրականացնել՝ ֆինանսական շուկայում տոկոսադրույքների ավելի կտրուկ նվազեցման ճանապարհով:

[1] Ըստ գնաճի հաշվետվության չորրորդ եռամսյակի ընթացքում 12 –ամյա բնականոն գնաճը որոշ չափով ավելացել է՝ տարվա վերջին կազմելով 3.5 տոկոս: